

No. 111111

Մարտ 12, 1953

Հոգեշնորհ
Տ. Սուրբիաս վրդ. ԳալՅանան
Նախագահ Հոգաբարձութեան
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Ս. Միլիօքի:

Սիրելի Հայր Սուրբիաս,

Ստացուած է Փետրուար 1 թուակիր Զեք տեղեկագիրը որով
կը տեղեկացնէիք թէ Զեք Նախագահութեամբ տեղի ունեցած է Համայն-
քիդ Հոգաբարձական մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով ընտ-
րութեան արդիւնքը կը խնդրէիք վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով
ընտրուած են եւ ընտրողներու մեծ մասին վստահութիւնը կը վայելեն
իբրեւ Եկեղեցւոյդ Նախանձախնդիր, անձնուէր եւ պարտաճանաչ անդամ-
ներ, կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը ըստ յիշեալին:—

Տիարք Յովակիմ Երլանճի
Յովհաննէս Սարեան
Դազէս Պարսամբան
Գաբրէլ Գաբրէլեան
Արթըր Պարսամբան
Եղիա Զէօրտիւքեան
Սարգիս Պարսամբան

Կօրհները նորընտիր Հոգաբարձուները եւ վստահ ենք որ
անոնք իրենց ջանքերը միացնելով պաշտօնի վրայ մնացող անդամներուն
աշխատանքներուն պիտի գործեն Աստուծոյ փառքին եւ մեր սուրբ Եկե-
ղեցիին պայծառութեան համար: Մաղթելով կարողութիւն եւ յաջողու-
թիւն ի Տեառնէ

Մնամք Հայրական սիրոյ ողջունիւ
աղօթակից

ՓՈՒԱՆՈՐԴ ԱՌԱՋՆՈՐԴԻ